**Թեմատիկ պլանավորում**
**«Հայոց պատմություն»**
**8-րդ դասարան**
**Շաբաթական 1.5 ժամ**
**Տարեկան 51 ժամ**

**Դասագրքի հեղինակներ՝**

1. **Հայոց պատմություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար /Աշոտ Մելքոնյան, Արամ Սիմոնյան, Արամ Նազարյան, Հակոբ Մուրադյան/ Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2018 թ.**

2. **Հայոց պատմություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար /Վ.Բարխուդարյան, Պ. Չոբանյան, Ա. Խառատյան, Է. Կոստանդյան, Ռ. Գասպարյան, Ռ. Սահակյան, Ա. Հակոբյան/ Երևան «Մանմար» հրատարակչություն, 2018 թ.**

**Թեմատիկ պլան կազմող ուսուցիչներ՝**

1. Հասմիկ Մարգարյան – ԿԶՆԱԿ հիմնադրամի մասնագետ
2. Անժելա Միքայելյան, Աբովյանի թիվ 7 հիմնական դպրոցի ուսուցչուհի
3. Մերի Բաբայան, Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի թիվ 57 հինական դպրոցի ուսուցչուհի
4. Գոհար Ղանդիյան Երևանի Աշոտ Մանուկյանի անվան թիվ 93 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի
5. Մերի Ավետիքյան, Երևանի Դավիթ Հովսեփյանի անվան թիվ 191 հիմնական դպրոցի ուսուցչուհի
6. Սյուզաննա Հովսեփյան, Գեղարքունիքի մարզի Ծովակաթի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի:
7. Ծաղիկ Կյուրդինյան, Երևանի թիվ 173 հիմնական դպրոցի ուսուցչուհի

**Պատասխանատու՝** ԿԶՆԱԿ – ի ուսումնական բնագավառների մշակման և զարգացման բաժնի մասնագետ Հասմիկ Մարգարյան

| **Ներածություն** | |
|---|---|
| **Նպատակ** | Նպաստել «Հայոց պատմություն» առարկայի 8-րդ դասարանի բովանդակային հիմնական |

| | |
|---|---|
| | նյութի, հայոց պատմության Նոր շրջանի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը: |
| **Վերջնարդյունքներ** | **Կարողանա՝**<br>- Ընդհանուր գծերով ներկայացնել 7-րդ դասարանի «Հայոց պատմություն» առարկայի ուսումնական տարվա ընթացքում անցնելիք նյութի ընդհանուր բովանդակությունը,<br>- Թվարկել Հայոց պատմության Նոր շրջանի առանցքային փաստերը, իրադարձությունները, գործիչներին, ազատագրական պայքարի և մշակութային կյանքի կարևոր կենտրոնները: |

| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
|---|---|---|
| 1 | «»Զանգակ» 3-4<br>«Մանմար» 3-5 | Ներածություն |

**Բաժին 1**
**Հայաստանը XVIIդարի երկրորդ կեսից մինչև XIXդարի առաջին կես**
**12 ժամ**

**Գլուխ/ Թեմա I.**
**Ազատագրական պայքարի նոր փուլը /«Զանգակ» /**
**Ազատագրական պայքարի նոր փուլը 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարում**
**/5 ժամ/**

| | |
|---|---|
| **Նպատակ** | Նպաստել 17-րդ դ. երկրորդ կեսի և 18-րդ դարի ազատագրական պայքարի մասին գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի ազատագրական պայքարի կարևոր փաստերը, իրադարձությունները և պայքարի հայտնի գործիչների գործունեությունը բնութագրելու, բացատրելու, համեմատելու, արժորելու կարողությունների զարգացմանը: |
| **Վերջնաարդյունք** | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել Հայաստանի ազատագրության համար մղվող պայքարի աշխուժացման սկիզբը 17-րդ դարի 2-րդ կեսին |

| | |
|---|---|
| | - Թվարկել հայտնի գործիչների անուններ, նրանց կողմից իրականացված ազատագրական պայքարի ծրագրի որոշ դրույթներ |
| | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել Արցախի ազատագրական պայքարի գլխավոր գործիչներին, նշանավոր պատմական իրադարձությունները<br>- բացատրել սղնախ եզրույթը |
| | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել Սյունիքում ազատագրական պայքարի պայքարի գլխավոր գործիչներին, նշանավոր ճակատամարտերը<br>- Բնութագրել Հալիձորի ճակատամարտը |
| | **Կարողանա՝**<br>- Բացատրել Խամսայի մելիքության նշանակությունը<br>- Բացատրել գաղութահայ կենտրոնների դերը հայապահպանման գործում:<br>- Ներկայացնել Հովսեփ Էմինի գործունեությունը |
| | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել հայտնի գործիչների կողմից կազմած ծրագրերի որոշ դրույթներ<br>- բացատրել և արժևորել ազատագրական պայքարի անհրաժեշտությունը |

| Ժամ | Էջ | Դաս |
|---|---|---|
| 1 | «Զանգակ» 6-10 | Դաս 1 «Հայ ազատագրական պայքարի վերելքը»: |
| | «Մանմար» 6-11 | § 1 «Ազատագրական պայքարի աշխուժացում»: |
| 1 | «Զանգակ» 11-15 | Դաս 2. «Զինված պայքարը Արցախում»: |
| | «Մանմար» 11-16 | § 2. «Ազատագրական զինված պայքարը Արցախում»: |
| 1 | «Զանգակ» 16 -19 | Դաս 3. «Զինված պայքարը Սյունիքում»: |
| | «Մանմար» 16 - 21 | § 3. «Սյունիքի հայկական իշխանությունը»: |
| 1 | «Զանգակ» 20 - 23 | Դաս 4. «Ազատագրական շարժումները 18-րդ դարի 30-80-ական թթ,» |

| | | |
|---|---|---|
| 1 | | /Հայկական ինքնավարությունն Արցախում: Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոնները/: |
| | «Մանմար» 19 - 23 | § 4. «Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոններ»: /Հայկական ինքնավարությունն Արցախում, Հովսեփ Էմինի գործունեությունը/: |
| | «Զանգակ» 24 - 27 | Դաս 5. «Ազատագրական շարժումները 18-րդ դարի 30-80-ական թթ.» /Մադրասի հայրենասիրական խմբակը: Հայաստանի ազատագրության ծրագրերը/: |
| | «Մանմար» 23 - 27 | § 4. «Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոններ» /Մադրասի հայրենասիրական խմբակը: Հայաստանի «Հյուսիսային» և «Հարավային» ծրագրերը/ |
| 1 | Կրկնություն | |

**Գլուխ II / «Զանգակ» /**
**Հայաստանը XIX դարի առաջին կեսին/4 ժամ/**
**Թեմա II /Մանմար/**
**Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին:/3 ժամ/**
**Թեմա III /Մանմար/**
**/Արևմտյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին: /1 ժամ/**

| | |
|---|---|
| **Նպատակ** | Նպաստել **XIX** դարի սկզբին Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական կացության, վարչական կյանքի մասին գիտելիքների ձեռք բերմանը, կարևոր իրադարձությունները, գործիչներին և նրանց հետ կապված փաստերը, ժամանակաշրջանին բնորոշ որոշ հասկացությունները բացատրելու, համեմատելու, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին անցնելու իրողությունը տեսակետ հայտնելու, գնահատելու կարողությունների զարգացմանը: |

| | |
|---|---|
| Վերջնարդյունքներ | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել և բացատրել Արևելյան Հայաստանի վարչա-քաղաքական սոցիալ-տնտեսական կյանքի հետ կապված կարևոր փաստեր<br>- բացատրել խանություններ, մահալներ, միրբոլուքներ, քալանթարներ հասկացությունները |
| | **Կարողանա՝**<br>- ներկայացնել 1826-1828թթ ռուս-պարսկական պատերազմի որոշ նշանավոր դրվագներ,<br>- թվարկել հայ ժողովրդի ազատագրական ձգտումների հետ կապված նշանավոր մեկ կամ երկու գործիչների անուններ,<br>- առանձնացնել Թուրքմենչայի պայմանագրի հիմնական դրույթները: |
| | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել և բացատրել Արևելյան Հայաստանում 1828 թ-ից հետո Ռուսական վարչաձևի հաստատման կարևոր փաստեր<br>- բացատրել Հայկական մարզ, եկեղեցական կանոնադրություն հասկացությունները: |
| | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել և բացատրել Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, հասարակական քաղաքական կյանքի հետ կապված կարևոր փաստեր<br>- բացատրել վիլայեթ /փաշայություն/, սանջակ /գավառ/, էնաֆություն և ռայա հասկացությունները,<br>- թվարկել տվյալ ժամանակաշրջանի գործիչների անուններ |

| Ժամ | Էջ | Դաս |
|---|---|---|
| 1 | «Զանգակ»՝ 28-30 | Դաս 6 «Արևելյան Հայաստանը XIX դարասկզբին» |

| | | |
|---|---|---|
| | «Մանմար»՝ 30-32 | Թեմա 2 § 1. «Վարչաքաղաքական իրավիճակը Արևելյան Հայաստանում»: |
| 1 | «Զանգակ»՝ 31-35 | Դաս 7. «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման նոր փուլը»: |
| | «Մանմար»՝ 32-37 | § 2. «Ռուս-պարսկական 1826-1828 թթ պատերազմը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին»: |
| 1 | «Զանգակ»՝ 36-38 | Դաս 8. «Ռուսական վարչաձևի հաստատումը Արևելյան Հայաստանում»: |
| | «Մանմար»՝ 38-41 | § 3. «Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրու-թյան կազմում 1830-1840-ական թվականներին»: |
| 1 | «Զանգակ»՝ 39-42 | Դաս 9. «Արևմտյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին»: |
| | «Մանմար»՝ 43-46 | Թեմա 3 § 1. «Իրավիճակը Արևմտյան Հայաստանում և ռուս-թուրքական առաջին պատերազմը»: |
| **Գլուխ III<br>Հայ մշակույթը նոր շրջանի առաջին փուլում /«Զանգակ»/<br>Թեմա IV / «Մանմար»/<br>Մշակույթը XVII դարի երկրորդ կեսին- XIX դարի առաջին կեսին<br>/3 ժամ/** | | |
| **Նպատակ** | | Նպաստել XVII-XIX դարերի հայկական մշակույթի կենտրոնների, մշակույթի բնագավառների,կրթական հաստատությունների, նշանավոր գործիչների և ստեղծագործությունների և գարվեստի գործերի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, մշակույթի զարգացման պայմանները, առանձնահատկությունները, ձեռքբերումները համեմատելու, համադրելու, բացատրելու, բնութագրելու, արժևորելու կարողությունների զարգացմանը |
| **Վերջնարդյունքներ** | | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել XIX դդ առաջին կեսի մշակութային կյանքի հիմնական կենտրոնները:<br>- Ներկայացնել և բացատրել ժամանակաշրջանի կրթական համակարգի վերաբերյալ կարևոր փաստերը: |

| | | |
|---|---|---|
| | | - թվարկել XVII- XIX դդ առաջին կեսերին բացված հայկական դպրոցները: |
| | | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել և բնութագրել Արևելյան Հայաստանում բացված առաջին տպարանի մասին փաստեր<br>- Ներկայցնել հայկական առաջին ամսագիրը:<br>- Արժևորել տպագրության դերը |
| | | **Կարողանա՝**<br>- թվարկել XVII- XIX դդ առաջին կեսի մշակույթի նշանավոր կենտրոններ, գործիչների անուններ:<br>- արժևորել ժամանակաշրջանի մշակութային ձեռքբերումները: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | «Զանգակ» 43-45 | Դաս 10 «Մշակութային կյանքի զարգացումը» |
| | «Մանմար» 49-50 | § 1 «Կրթություն, գիտություն» |
| 1 | «Զանգակ» 45-46 | Դաս 10 «Մշակութային կյանքի զարգացումը» |
| | «Մանմար» 55-57 | § 3 «Մամուլը և տպագրությունը» |
| 1 | «Զանգակ» 47-50 | Դաս 11 «Գիտությունը և արվեստը» |
| | «Մանմար» 50-55 | § 2 «Գրականություն, արվեստ» |
| 1 | **Կրկնություն** | |
| 1 | **Ամփոփիչ կրկնություն** | |
| **Բաժին II**<br>**/27 ժամ/**<br>**Հայաստանը XIX դարի երկրորդ կեսին և XX դարասկզբին** | | |
| **Գլուխ IV /«Զանգակ»/**<br>**Հայաստանը Ռուսաստանյան և Օսմանյան կայսրությունների կազմում**<br>**Թեմա V /«Մանմար»/**<br>**Հայաստանը Ռուսական և Օսմանյան կայսրությունների կազմում**<br>**/2 ժամ/** | | |

<table>
<tr><td colspan="2">Նպատակ</td><td>Նպաստել Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, կարևոր իրադարձությունները և փաստերը բացատրելու կարողությունների զարգացմանը::</td></tr>
<tr><td colspan="2" rowspan="2">Վերջնարդյունքներ</td><td>Կարողանա՝<br>- քարտեզի վրա ցույց տալ Արևելյան և Արևմտյան Հայաստանը<br>- ներկայացնել և բացատրել ժամանակաշրջանի Արևելյան Հայաստանի դրության վերաբերյալ որոշ փաստեր:</td></tr>
<tr><td>Կարողանա՝<br>- Ներկայացնել և բացատրել Արևմտյան Հայաստանի դրության վերաբերյալ որոշ փաստեր<br>- պարզաբանել Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի որոշ առանձնահատկություններ</td></tr>
<tr><td></td><td>Էջ</td><td>Դաս</td></tr>
<tr><td rowspan="2">1</td><td>«Զանգակ» 54-58</td><td>Դաս 12 «Արևելյան Հայաստանի դրությունը»</td></tr>
<tr><td>«Մանմար» 60-62</td><td>Թեմա 5 § 1 «Տեղաշարժեր գյուղատնտեսության մեջ»</td></tr>
<tr><td rowspan="2">1</td><td>«Զանգակ» 59-63</td><td>Դաս 13 «Արևմտահայերի դրությունը»</td></tr>
<tr><td>«Մանմար» 63-67</td><td>§ 2 «Իրավիճակը Արևելյան և Արևմտյան Հայաստանում»</td></tr>
<tr><td colspan="3">Գլուխ 5 /«Զանգակ»/<br>Հայ ազգային - հասարակական շարժումները:<br>Թեմա 6 /«Մանմար»/<br>Ազգային — հասարակական շարժումները:<br>/2 ժամ/</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակ</td><td>Նպաստել Հայ ազգային - հասարակական շարժումների մասին գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները, գործիչների գործունեությունը համեմատելու, բացատրելու, վերլուծելու, արժևորելու, դիրքորոշում արտահայտելու կարողությունների զարգացմանը:</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| Վերջնարդյունք | | **Կարողանա՝**<br>– ներկայացնել և բացատրել հայ հասարակական – քաղաքական մտքի նշանավոր գործիչների գործունեությունը և նրանց հետ կապված կարևորագույն փաստերը<br>– համեմատել հասարակական քաղաքական տարբեր հոսանքները: |
| | | **Կարողանա՝**<br>– Թվարկել «Ազգային սահմանադրություն» անվանումը ստացած կանոնադրության հեղինակներին<br>– Ներկայացնել և բացատրել Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը,«Ազգային սահմանադրություն»ը |
| **Ժամ** | Էջ | **Դաս** |
| 1 | «Զանգակ» 64 – 67 | Դաս 14. «Հասարակական –քաղաքական միտքը»: |
| | «Մանմար» 68 – 71 | Թեմա 6 § 1. «Հայ հասարակական միտքը»: |
| 1 | «Զանգակ» 68 – 72 | Դաս 15. «Արևմտահայերի ազգային կյանքի երկու նշանավոր շրջադարձերը»: |
| | «Մանմար» 71 – 75 | § 2. «Արևմտահայերի ազգային Սահմանադրությունը:: Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը»: |

**Գլուխ 6 /«Զանգակ»/**
**Հայկական Հարցի միջազգայնացումը**
**Թեմա 7 /«Մանմար»/**
**Ռուս–թուրքական 1877 – 1878 թթ. պատերազմը և Հայկական Հարցի միջազգայնացումը:**
**/2 ժամ/**

| | |
|---|---|
| **Նպատակ** | Նպաստել ռուս–թուրքական 1877 – 1878 թթ. պատերազմի և Հայկական Հարցի միջազգայնացման և ունեցած հետևանքների վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, պատերազմող կողմերի նպատակների, Հայկական Հարցի ծագման և միջազգայնացման գործընթացի, պայմանագրերի և տվյալ ժամանակաշրջանի նշանավոր գործիչների |

| | | |
|---|---|---|
| | | գործունեությունը բացատրելու, համեմատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը: |
| Վերջնարդյունք | | **Կարողանա՝**<br>- թվարկել 1877 – 1878 թթ. պատերազմի կարևորագույն իրադարձությունները.<br>- բացատրել պատերազմող կողմերի նպատակները |
| | | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքման և Բեռլինի վեհաժողովի հրավիրման տարեթվերը:<br>- Համեմատել Սան Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովի՝ հայերի համար ունեցած նշանակությունը:<br>- բացատրել Հայկական Հարցի միջազգայնացման հետևանքները |
| **ժամ** | **էջ** | **Դաս** |
| 1 | «Զանգակ» 73 - 75 | Դաս 16. «Ռուս-թուրքական 1877 - 1878թթ պատերազմը և Հայաստանը»: |
| | «Մանմար» 77 - 79 | Թեմա 7. § 1. «Ռուս-թուրքական 1877 - 1878թթ պատերազմը»: |
| 1 | «Զանգակ» 76 – 79 | Դաս 17. «Հայկական Հարցի միջազգայնացումը»: |
| | «Մանմար» 79 - 82 | § 2. «Հայկական Հարցի միջազգայնացումը»: |

**Գլուխ VII /«Զանգակ»/**

**Ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի 70-90-ական թվականներին**

**Թեմա 8 /«Մանմար»/**

**Ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի 70-90- ական թվականներին**

**Թեմա 9 /«Մանմար»/**

**Արևմտահայության կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը 1890 –ական թթ. /5 ժամ/**

| | |
|---|---|
| **Նպատակ** | Նպաստել 19-րդ դարի 70-90-ական թթ. ազգային ազատագրական պայքարի մասին գիտելիքների ձեռքբերմանը, ազատագրական պայքարի հետ կապված կարևոր փաստերը, կենտրոնները, գործիչների գործունեությունը, կարևորագույն դրվագները բացատրելու, համեմատելու, գնահատելու, դիրքորոշում հայտնելու, արժևորելու կարողությունների զարգացմանը: |
| **Վերջնարդյունքը** | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել և բացատրել ազատագրական շարժման վերելքի պատճառները, խմբակների և կազմակերպությունների հետ կապված կարևոր փաստերը |
| | ***Կարողանա՝***<br>- Ներկայացնել և բացատրել կուսակցությունների ծրագրերի հիմնական դրույթները |
| | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել և բացատրել հայդուկային շարժան սկիզբը և նշանավոր հայդուկների |
| | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել և բացատրել 1890-ական արևմտահայության բնաջնջման կարևոր փաստերը |
| | **Կարողանա՝**<br>- Թվարկել և բացատրել 1890-ական թթ. ինքնապաշտպանական մարտերը |

| **Ժամ** | Էջ | Դաս |
|---|---|---|
| 1 | «Զանգակ» 80-82 | Դաս-18.«Ազատագրական խմբակները և կազմակերպությունները» |
| | «Մանմար» 83-85 | Թեմա 8. Դաս-1.«Ազատագրական պայքարի թևակոխումը զինված պայքարի փուլ» |
| 1 | «Զանգակ» 83-87 | Դաս-19. «Հայ ազգային կուսակցությունները» |
| | «Մանմար» 85-88 | §2.«Հայ ազգային կուսակցությունները» |

| | | |
|---|---|---|
| 1 | «Զանգակ» 88-91 | Դաս-20 Հայդուկային շարժումը |
| | «Մանմար» 88-92 | §3.Հայդուկային շարժումը |
| 1 | «Զանգակ» 92-94 | Դաս-21. Հայոց Ցեղասպանության սկիզբը.Դիմադրական մարտերը 1890-ական թվականներին.(Հայոց ցեղասպանության սկիզբը |
| | «Մանմար» 92-93<br>94-98 | Թեմա 9. Դաս-1.Սասունի ապստամբությունը Արևմտահայության կոտորածները (Հայկական կոտորածների նախապատրաստությունը, բարենորոգումների մայիսյան ծրագիրը, արևմտահայության զանգվածային կոտորածները, կոտորրծների հետևանքները և Մեծ տերություն-ները և Արևմտահայերի կոտորածները.) |
| 1 | «Զանգակ» 94-96 | Դաս-21. Հայոց Ցեղասպանության սկիզբը. Դիմադրական մարտերը 1890-ական թթ.(Սասունի և Զեյթունի հերոսամարտերը, Պաշտպանական կռիվները Վանում ) |
| | «Մանմար»՝ 93-94,<br>98-102 | Թեմա-9.Դաս-2. Արևմտահայության ինքնապաշտպանական մարտերը.(Սասունի 1894 -թ ապստամբությունը, Զեյթունի 1895 թ ապստամ-բությունը, Ինքնապաշտպանական մարտերը) |
| 1 | **Կրկնություն** | |

| |
|---|
| **Գլուխ 8. Ազգային շարժումների ծավալումը 20-րդ դարասկզբին /«Զանգակ»/**<br>**Թեմա 10. Ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում /«Մանմար»/**<br>**Թեմա 11 Հասարակական-քաղաքական շարժումներն Արևելյան Հայաստանում /«Մանմար»/**<br>**/3 ժամ/** |

| | |
|---|---|
| **Նպատակ** | Նպաստել 20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքարի մասին գիտելիքների ձեռքբերմանը,տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները, գործիչների գործունեությունը, կարևոր հասկացությունները բացատրելու, վերլուծելու, համեմատելու, գնահատելու կարողությունների զարգացմանը: |

| | | |
|---|---|---|
| **Վերջնարդյունքներ** | | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել Արևմտյան Հայաստանում 20-րդ դարի առաջին տասնամյակում տեղի ունեցած կարևորագույն փաստերը, իրադարձությունները<br>- թվարկել հայ ֆիդայական շարժման գործիչների և ապստամբության օջախները: |
| | | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել Ցարական կառավարության իրապարակած հակահայկական օրենքը<br>- բացատրել «հայ-թաթարական ընդհարումներ» հասկացությունը<br>- թվարկել ինքնապաշտպանական մարտերի ղեկավար գործիչների |
| | | **Կարողանա՝**<br>- ներկայացնել և բացատրել Երիտթուրքերի հեղաշրջումը, 1912-1914 թթ. Հայկական հարցի վերաբացումը, Կիլիկիայի կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, ռուս-թուրքական համաձայնագիրը: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | «Զանգակ» 97-102 | Դաս 22. Ազատագրական պայքարը Արևմտյան Հայաստանում |
| | «Մանմար» 103-107 | Թեմա 10 § 1 Ազատագրական շարժումների ծավալումը 20-րդ դարի սկզբին |
| 1 | «Զանգակ» 102-106 | Դաս 23. Համազգային պայքարի վերելքը |
| | «Մանմար» 108-112,<br>112-114 | § 1-2 Ցարիզմի գաղութային քաղաքականությունը: Արևելյան Հայաստանը 20-րդ դարի սկզբին<br>§ 3 Արևելյան Հայաստանը 1907-1912 թթ. |
| 1 | «Զանգակ» 106-112 | Դաս 24 Արևմտահայությունը Առաջին աշխարհամարտի նախօրեին |
| | «Մանմար» 115-117<br>117-120 | § 4. Երիտթուրքական հեղաշրջումը և արևմտահայությունը<br>§ 5 Հայկական հարցը 1912-1914 թթ. |

| | | |
|---|---|---|
| | | - Թվարկել ինքնապաշտպանական մարտերի նշանավոր գործիչների |
| | | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել և բացատրել իրադրությունն Անդրկովկասում և Հայաստանում Փետրվարյան հեղափոխության շրջանում |
| | | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել և բացատրել իրադրությունն Անդրկովկասում և Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխության շրջանում |
| | | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել և բացատրել Հայկական զորամիավորումների ստեղծումը, Անդրկովկասի անկախացման գործընթացը |
| | | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել, բացատրել և արժևորել մայիսյան հերոսամարտերի կարևորագույն փաստերը<br>- Թվարկել Մայիսյան հերոսամարտերի նշանավոր գործիչներին |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | «Զանգակ» 112 - 116 | § 25. «Համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատը»: |
| | «Մանմար» 122 - 125 | Թեմա 12 § 1. «Ռազմական գործողությունները»: |
| 1 | «Զանգակ» 117 - 120 | § 26. «Հայ կամավորական շարժումը»: |
| | «Մանմար» 122 - 125 | Թեմա 12 § 1. «Ռազմական գործողությունները»: |
| 1 | «Զանգակ» 122 - 129 | Դաս 27. «Հայոց Մեծ եղեռնը» |
| | «Մանմար» 125 - 130 | § 2 «Հայոց Մեծ Եղեռնը» |
| 1 | «Զանգակ» 129 - 134 | Դաս 28 .«1915 թվականի հերոսամարտերը» |
| | «Մանմար» 130 - 133, 133 - 137 | § 3. «Հայկական ցեղասպանություններ և առաջադեմ հասարակայնությունը»:<br>§ 4. «Ինքնապաշտպանական մարտերը 1915թ.» |

| | | |
|---|---|---|
| 1 | «Զանգակ» 134-137 | Դաս 29. «Ազգային –քաղաքական կյանքի վերելքը 1917թ.» |
| | «Մանմար» 139-144 | Թեմա 13 «Իրադրությունը Անդրկովկասում և Հայաստանում փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների շրջանում» |
| 1 | «Զանգակ» 138-141 | Դաս 30. «Բոլշևիկյան հեղաշրջումը և Հայաստանը» |
| | «Մանմար» 145-148 | Թեմա 14 § 1. «Թուրք-Անդրկովկասյան հարաբերությունները 1917թ վերջին և 1918 թ սկզբներին» |
| 1 | «Զանգակ»142-145 | Դաս-31. «Ռազմաքաղաքական իրավիճակը և Անդրկովկասի անկախացումը» |
| | «Մանմար» 145-148 | Թեմա 14.«Թուրք-անդրկովկասյան հանրապետությունները 1917թվականի վերջին և 1918 թվականի սկզբներին» (Հայկական զորամիավորումների ստեղծումը, Թուրքերի հարձակումը, Տրապիզոնի բանակցությունները) |
| 1 | «Զանգակ» 146-152 | Դաս-32. «Մայիսյան փառահեղ հերոսամար-տերը» |
| | «Մանմար» 148-154 | Թեմա 14 § 2. «Թուրքական զորքերի ներխու-ժումը Արևելյան Հայաստան: Մայիսյան հերոսամարտեր» |
| 1 | **Կրկնություն** | |
| **Գլուխ X / «Զանգակ» /<br>Հայկական մշակույթը նոր շրջանի երկրորդ փուլում<br>Թեմա XV / «Մանմար» /<br>Մշակույթը XIX դարի երկրորդ կեսին- XX դարի սկզբին<br>/5 ժամ/** | | |
| **Նպատակ** | | Նպաստել XIX դարի երկրորդ կեսից մինչև 1918 թ. ընկած ժամանակաշրջանի հայկական մշակույթի կենտրոնների, մշակույթի բնագավառների, կրթական հաստատությունների նշանավոր գործիչների և ստեղծագործությունների և արվեստի գործերի վերաբերյալ գիտելիքների ձևոքբերմանը, մշակույթի զարգացման պայմանները, առանձնահատկությունները, |

| | | |
|---|---|---|
| | «Մանմար» 155-159 | Թեմա 15 § 1 «Կրթություն և գիտություն» |
| 1 | «Զանգակ» 157-159 | Դաս 34 «Գիտության զարգացումը» |
| | «Մանմար» 155-159 | § 1 «Կրթություն և գիտություն» |
| 1 | «Զանգակ» 160-163 | Դաս 35 «Գրականությունը և մամուլը» |
| | «Մանմար» 160-163 | § 2 «Մամուլ: Գրականություն» |
| 1 | «Զանգակ» 164-165 | Դաս 36 «Արվեստը և ճարտարապետությունը» /Կերպարվեստ: Թատրոն/ |
| | «Մանմար» 163-164 | § 3 «Արվեստը» /Կերպարվեստ: Թատրոն/ |
| 1 | «Զանգակ» 165-167 | Դաս 36 «Արվեստը և ճարտարապետությունը» /Երաժշտություն, ճարտարապետություն, Քաղաքաշինություն/ |
| | «Մանմար» 163-165 | § 3 «Արվեստը» /Երաժշտություն, Ճարտարապետություն: / |
| 1 | Կրկնություն | |

| | |
|---|---|
| **Բաժին III**<br>**Հայկական գաղութները Նոր շրջանում /«Զանգակ»/**<br>**Հայկական գաղօջախները Նոր շրջանում /«Մանմար»/**<br>**/2 ժամ/** | |
| **Գլուխ XI Ազգային կյանքի կազմակերպումը և մշակույթի զարգացումը /«Զանգակ»/**<br>**Հայկական գաղօջախները Նոր շրջանում /«Մանմար»/**<br>**/2 ժամ/** | |
| **Նպատակ** | Նպաստել Նոր շրջանի հայկական գաղթավայրերի գիտելիքների ձեռք բերմանը, առաջացման ժամանակաշրջանները, գաղութահայ կենտրոնները և գործիչներին, գաղթավայրերի կյանքին վերաբերող կարևոր դրվագները և իրադարձությունները, գաղութների բացատրելու, համեմատելու, գնահատելու, գաղթավայրերի դերը հայապահպանության գործում արժևորելու կարողությունների զարգացմանը: |
| **Վերջնարդյունքներ** | **Կարողանա՝**<br>- ներկայացնել և բացատրել XVII– XX դարի սկզբի հայկական գաղութների առաջացման ժամանակագրական շրջանակները:<br>- բացատրել «գաղութ», «համայնք», հասկացությունները: |

| | | |
|---|---|---|
| | | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել և բացատրել ազգային–քաղաքական կյանքի կազմակերպման որաշ առանձնահատկություններ:<br>- թվարկել համազգային կառույցները կամ կազմակերպությունները: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | «Զանգակ»՝ 170-173 | Դաս 37. «Հիմնական գաղթավայրերը և խոշոր համայնքները»: |
| | «Մանմար» 167-182 | §1,2,3 «Հայկական գաղթօջախները Նոր շրջանում» |
| 1 | «Զանգակ»՝ 174-178 | Դաս 38 «Գաղթավայրերի դերը հայապահպանության գործում»: |
| | «Մանմար» 167-182 | § 1,2,3 «Հայկական գաղթօջախները Նոր շրջանում» |
| 1 | **Կրկնություն** | |
| 2 | **Ամփոփիչ կրկնություն** | |

Թեմատիկ աշխատանքներն ուսուցիչը՝ իր հայեցողությամբ, կարող է հանձնարարել թեմաներից հետո կրկնության համար նախատեսված ժամերի հաշվին:
Գործնական աշխատանքների հարցում ուսուցիչն ավելի ազատ է, դրանք կարող է հանձնարարել ցանկացած ժամի ընթացքում, կրկնության ժամերին կամ տանը:
Կիսամյակային աշխատանքները՝ կիսամյակի ավարտին, անհրաժեշտության դեպքում, տեղաշարժելով ամփոփիչ կրկնության կամ կրկնության համար նախատեսված ժամերը:

01.09.2022թ.
Արձանագրություն 5
Ուս. առարկ. գծով մեթոդմիավորման ղեկավար [illegible] /Հ. Մելիքսեթյան/: